ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

THE RIGHT TO HEALTH
HUMAN RIGHTS NON-
GOVERNMENTAL
ORGANIZATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

N 14

02.02. 2024թ

Հարգելի պարոն Հարությունյան

«Առողջության Իրավունք» ԻՀԿ-ին են դիմել մի խումբ վարդենիսցիներ՝ ահազանգելով, որ <<Վարդենիսի ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից խախտվում են պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բնակչությանը ցուցաբերվող շտապ բժշկական օգնության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես կանչերը սպասարկվում են առանց բժիշկի, տեղափոխումները կատարվում են վճարովի հիմունքներով և այլն:

Հարգելի պարոն Հարությունյան, հաշվի առնելով վերոգրյալը, ակնկալում եմ Ձեր հանձնարարականը հետևյալ խնդիրների պարզաբանման հարցում.

1. Գեղարքունիքի մարզպետարարանի կողմից հաստատվել է <<Վարդենիսի ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից կատարվող վճարովի ծառայությունների գնացուցակը շտապ բժշկական օգնության ծառայության մասով (առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել):
2. Ինչպիսի՞ շտապ բժշկական օգնության ծառայություն է մատուցվում <<Վարդենիսի ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից (ընդհանուր գծային, ֆելդշերական բրիգադներ):

Ընդհանուր գծային շտապ բժշկական օգնության ծառայություն դեպքում խնդրում եմ տրամադրել 2023 թվականի և 2024 թվականի հունվար, փետրվար, մարտ և ապրիլ ամիսների բժիշկների հերթապահությունների գրաֆիկը:

3. Քանիսն՞ են եղել կանչերի թիվը 2022 և 2023 թվականներին:
4. Քանի՞ հիվանդ է տեղափոխվել ք. Երևան, քանիսը՞ մարզային հիվանդանոցներ:
5. Քանի՞ շտապ օգնության մեքենա ունի <<Վարդենիսի ԲԿ>> ՓԲԸ-ն իր հաշվեկշռում:
6. Առանձնացված են արդյոք դիակ տեղափոխող մեքենաները և քանիսն են դրանք:

ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇ ՊՈՂՈՍՅԱՆ

0010 ք. Երևան, Փավստոս Բուզանդի փ. 7 հեռ. 012 52-04-44 aroxjutyan-iravunq2022@mail.ru